ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

23. 12. 2022

No 01/01-1480

Ա/Ձ Հրանտ Համբարձումյանին
ՀՎՀՀ 47945505
Գ. Այնթապ
Հեռ 077-06-30-13

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Հրանտ Համբարձումյանի միջև 05.10.2022թ. կնքված ՈՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-22/ՀՏ-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր մինչև 2022թ դեկտեմբերի 5-ը մատակարարել՝ դյուրակիր համակարգիչ DELL թվով 1(մեկ) հատ և համակարգիչ 3-ը մեկում Lenovo թվով 10 (տասը) հատ, սակայն Ա/Ձ Հրանտ Համբարձումյանի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում ապրանք չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի <<բ>> ենթակետը՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել: «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 23.12.2022թ-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ վերընշված ապրանքների մասով:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Ա/Ձ Հրանտ Համբարձումյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին փոխանցել 47167,5 ՀՀ դրամ որպես տուժ և 31445 ՀՀ դրամ որպես տուգանք, պայմանագրի 6.2 և 6.3 կետի համաձայն:

Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին 635000 ՀՀ դրամ որպես տուժանք պայմանագրի կատարման ապահովում և 952 500 ՀՀ դրամ որպես որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 30.12.2022թ. ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ գնումների բաժին 502 սենյակ:

Ռեկտոր՝ _____ Դ. Գալոյան

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ. +37410 521720